

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻԻՌՈՂՆԻ

ՅՐՀՆՈՒԹԻՒՆԵՐ.

«Երե ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյն ոչ կարէ մտնել յարքայութիւն Աստուծոյ. զի ծրնեալն ի մարմնոյ մարմնն է եւ ծնեալն ի Հոգւոյ հոգի է»:

Յովն. Գ. 5 եւ 6.

Դժուար է մեր ազգային եկեղեցական կեանքի մէջ մի այլ կէտ ցոյց տալ որ ընդհանուրի համար աւելի մեծ, աւելի նուիրական խորհուրդ բովանդակէր, քան այն բուպէն, երբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Բահանայապետը կանգնած է Միառնի իջման տաճարի բեմի վերայ, ու Հուսաւորչի աջը ձեռին, եւ թաթախում է լուսաթաթախ այդ սուրբ աջը Սրբալոյս Միառնի կաթսայի մէջ. երբ ջերմեռանդ ուխտաւորը՝ մոռացած իւր շուրջը սիրող ժխորն ու անձկութիւնը, մոռացած ողջ աշխարհի տագնապն ու հոգսերը, անդուստ մի փափագ է զգում միայն՝ յառաջ նետուիլ, ջերմ կաթսայի կողերին անդրանիկ ջերմ համբոյրը դրոշմել, անպատում է և սքանչելի մի զգացմամբ սիրտը լիքն է զգում և շրթունքներն է միայն շարժել կարողանում, անթարգմանելի միմունջներով իւր Ամենակալ Տիրոջ հետ խօսում....

Այդպիսի մի բուպէ անցրինք ահա մի քանի օր առաջ, և արժան է, որ այժմ լուրջ

խորհրդածութեանց առարկայ դարձնենք այն ծարբեր եղանակաւ և տարբեր պատկերով մեր հոգեւոր տեսութեան դիմաց ներկայանում է այստեղ նոյն այն խորհուրդը, որ մի օր Փրկչի կենդանի խօսքերի մէջ փարիսեցի դիտնական Նիկողիմոսին ներկայացաւ և այնչափ շփոթեցրեց նորան։ Նիկողիմոսների համար, որոնց ինքնագոհ հպարտ միաբլբ քննութեան է ենթարկում երկինքն ու երկիր և մերժում արհամարհում է այն, ինչ որ իւր նեղ, խեղճուկ չափին համաձայն չէ՝ այսօր ևս ոչինչ չկող արտակարգ և խորհրդաւոր իրենց տեսածի և լսածի մէջ. նոքա պարզ արտաքին արարողութիւններն են միայն տեսնում և խորը թափանցել, այնտեղ ներդրածոյ Հոգւոյ խորհուրդներն ըմբռնել չեն կարող. «Բանգի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա, և ոչ կարէ գիտել, եթէ հոգեպէս քննիցի»։ Բայց ով մի անգամ աւազանի մկրտութեամբ ու Հոգւոյ դրոշմ է ընդունել և մի նոր հոգեւոր կեանքի համար վերածնունել, ով հոգեւոր զաւակ է ու Հուսաւորչի և ենթակայ է եղել նորա տան մէջ իշխող հոգւոյ ազդեցութեան, պէտք է ընդունակ լինի զանց անելու առ ժամ իւր շնչաւոր բնութեան թելադրութիւնները և հոգեպէս քննելու Աստուածային Հոգւոյ անհասանելի անօրինութիւնը։ Եւ ի՞նչ կը տեսնէ նա, կանաչ միւռնի այն փոքրիկ կաթսան մի ակնթարթի մէջ մեծանում՝ անկրօն լայնատարած մի ծով է դառնում, որ ողողում է հա-

յարնակ ողջ աշխարհը, զրախաի բուրմունք, երկնային ամենաառաջ շնորհ սփռելով ամեն տեղ նոյն շնորհն անխախտ մեծատան ապարանքում և թշուառ պանդուխտի հալածանաց յարկի տակ։ շնորհաբաշխ այդ սուրբ միւսոնի ամեն մի կաթիլ, հայ մանուկների ծակատին դրոշմած՝ դարձնում է նոցա լուսակէզ դառներ և ս. Լուսաւորչի փարախը ժողովում։ Անմահ Երկնաւոր Դառան շուրջը։

Ինչպիսի վեհ խորհուրդ, ինչ հրաշալի զօրութիւն մի բուռն հասարակ իւրի մէջ։ Սկսած այն օրից, երբ առաջին անգամ մեր լեռները բարձրացաւ Տիրոջ առաքեալը և խաչակրեց այս երկրին, երբ նորակառոյց Իջման տաճարի բեմը բարձրացաւ Տիրոջ այն մեծ խոստովանող մեր ս. Լուսաւորչի և իւր կենդանի աջով ս. միւսոն օրհնեց նորահաւատ հօտի համար՝ անթիւ անգամ կրկնուել է նոյն խորհուրդը և Աստուածային Հոգւոյ այդ ճնշխարհիկ զօրութիւնը օրհնեալ իւրի միջնորդութեամբ նորանոր սերունդներ է վերածնել յաւիտենական կեանքի համար, ժառանգաբար մէկից միւսին անցնելով՝ իբրեւ ամենաթանկագին աւանդ, իբրեւ հայ ժողովուրդի հոգեւոր միութեան ամենանուիրական երաշխիք։ Եւ ամեն անգամ երբ ս. Իջմածնի տաճարում միւսոն է օրհնուում, ս. Լուսաւորչի աջով, և հին միւսոնը նորի հետ խառնուում Լուսաւորչի յաջորդի ձեռքով՝ զգում է իւր հոգու խորքում հայ քրիստոնեայն, որ ամփոփուեցաւ այդտեղ, նորոգուեցաւ և կրկին պիտի ծաւալի ի սփիւռս ամբողջ աշխարհի ժառանգական այն մեծ շնորհը, որ այդպիսով մի նոր հանգոյց ևս աւելացաւ հների վերայ ու երկարեց իւր և իւր ժողովուրդի գաղափարական կեանքի թելը։ Իսկ երբ դարձնում է երախտադէտ հայեացքը դէպի այն եկեղեցին, դէպի աստուածակերտ այն սուրբ տաճարը, որ իւր լուսեղէն կամարների տակ պահպանում է այդ կեանքը՝ աչքին չեն երևում այլ ևս նորա արտաքին անշքութիւնն ու անբարեգարդութիւնը մտքից փախչում են նորոտ ներքին խեղճութեան համար ունեցած դառն հոգսերը՝ խորհրդաւոր պայծառութիւն, յաւատե անպարտելի զօրութիւն է միայն տեսնում և պատրաստ է բացականչել այն հրա-

շխօս փարգապետի, Յովհան Երզնկացու հետ։ «Այլ ի մեծն և ի զխաւորական բարին երանելի ևս և յոյժ խնդալի վասնդի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ, ի բարի սերմունս ցորենոյն որոմն ապականիչ ոչ խառնեցաւ, զագրիւր յստակ աւանդութեանց քոյ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց»։

Այո՛, միւսոն օրհնութեան վսեմ հանդէսը ամենից առաջ մխիթարութիւն է մեզ համար և կենդանի ոգեւորութեան առիթ, նա մեզ յիշեցնում է, որ ունինք մի բարիք, որ բոլորին փոխարինել կարող է, մի դանձ, որ անկողոպտելի է և անսպառ հարստութեան աղբիւր՝ Լուսաւորչի ս. հաւատը, այդ հաւատը մեր մէջ ներշնչող և պահպանող հոգին, և քանի կենդանի է նոյն հաւատը, նորոգուում է նոր միւսոնի հետ և նորանոր սերունդների կեանք պարզեւում՝ նահատակ նախնեաց անմահութեան հոգին՝ կենդանի ենք և մենք, կենդանի է հայ անունը։—Սակայն որչափ ենք գնահատում արդեօք այդ երկնատուր բարիքը, որչափ և ինչպէ՞ս ենք շահեցնում ու գործադրում ժառանգաբար մեր ձեռք հասած այն մեծ գանձը՝ պէտք է հարցնենք անմիջապէս և այն ժամանակ ոգեւորութիւնը տեղի կբայ կրկին տխուր մտածութիւնների։—Հոգին կենդանի ինչ է և միայն կենդանի կրճերի ներքոյ կարող է պահել իւր զօրութիւնը, որպէս զի ծաւալի նա ս. միւսոնի կաթիլների հետ և իրօք մի նոր սերնդի վերականգնութեան պատճառ լինի, հարկաւոր է, որ կենդանի և գործունեայ լինի նախ ներկայ սերունդի մէջ, կենդանի այն եկեղեցւոյ մէջ, որ իւր սրբադան խորհուրդներով հաղորդում է նորա զօրութիւնը իւր զաւակներին, բայց կենդանի բաւաւոր դաստիարակութեան միջոցաւ միայն արծարծում և ներգործական դարձնում։ Արդեօք զգում ենք մեր մէջ այդ կենդանութիւնը, նման չենք արդեօք այն ծառային, որ իւր տիրոջ ստացած աւանդը տանում գետնի տակն է թաղում և նորա շահեցման մասին ամենեւին չէ հոգում։

Թող ուրեմն իւրաքանչիւր հայի մէջ եռայ նախնեաց այն աստուածաբաշխ Հոգին ս. միւսոնի կաթնան ս. Իջմածնի ճաճարի

բեմի վերայ տեսնելիս և բազուկները դէպի երկինք՝ դէպի Աստուծոյ Միածին Որդին կարկառած՝ աղաչէր որ վերակենդանացնէ և արծարծէ նոյն հոգին իւր թանկագին արեամբ զնուած ժողովրդի մէջ։

Հրաշալի զօրութիւն պարգեւէ օրհնեալ իւզի կաթիլներին մի նոր սերունդ ի կեանս հրաւիրելու որ ոչ միայն մարմնով և արեամբ հաւաքատ ժառանգ լինի քրիստոնեայ հայութեան այլ հոգեով՝ դէպի Աստուծոյ արքայութիւն առաջնորդող չորսուի։ «Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է և ծնեալն ի չորսոյ հոգի է»։ զի «չորին է կենդանարար մարմին ինչ ոչ օգնէ»։

Կ. Վ.

Ս. ՄԻՒՌՈՆՕՐԸՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԷՍԸ.

Սեպտեմբերի 14-ին, Խաչվերացի տօնին, Մայր Աթոռում կատարուեցաւ Հայաստանեայց ս. Եկեղեցու նուիրական մեծագոյն հանդէսներէց մէկը՝ Սրբալոյս Միւռնի օրհնութիւնն որ առաջին անգամն էր տեղի ունենում Ծորին Ս. Օծութեան Տ. Տ. Մկրտիչ Վեհափառ Հայրապետի օրով։ Անշուշտ այսպիսի մեծ հանդէսների ժամանակ Մայր Աթոռում ամեն կողմից խմբուած տեսնել հայ ժողովրդին մի անգամ ևս սկանառես լինել հայ-քրիստոնէի ջերմեռանդութեանն, մի անգամ ևս հաւատարմաւոր որ նա սերտ կերպով կապուած է Լուսոյ Մօր Ս. Ըջմիածնի հետ մի հոգեգմայլ բերկրութիւն պիտի պատճառէր իւրաքանչիւր հայ անմեկի որդի ևս առաւել մեր Եկեղեցւոյ Դիտոյ՝ Ազգիս Վեհափառ Հայրապետին Պէտք է տեսել որ թէպէտ և պաշտօնական ծանուցումն չէր եղել ինչպէս յայտնի է Արարատի անցեալ համարից, բայց և այնպէս ուխտաւորների մի մեծ բազմութիւն էր ժողովուրդ մանաւանդ Աղեքսանդրապոլի Ղարսի և Ախալքալայի գաւառներից որոնց ժողովուրդը

մի զեղեցիկ սովորութեամբ օրինակելի կերպով ջերմ է դէպի ուխտադնացութիւններն։ սակաւ էին այլ գաւառներից եկողներն, մինչ՝ կարելի է տեսլ շրջակայ և մերձաւոր տեղերի հայ ազգութիւնն հեղեղի նման թափել էր Մայր Աթոռ։ Մայր Աթոռի հիւրատունն, միաբանութեան նոր շինութեան տեսնակներն մի մասը և մօտ քառասուն զինուորական վրաններ միայն ունէր հիւրընկալ մասնաժողովրդ որոնք հարկաւ բաւական չէին բոլոր հիւրերին ներս ընդունելու։ ուստի և բազմաթիւ ուխտաւորներ ինչպէս և միշտ հարկադրուած էին տեղաւորուել Վաղարշապատ զիւղում և կամ մնալ բացօթեայ։

Միւռնիօրհնէքի հանդէսը սկսուեց շաբաթ երեկոյին։ Վեհափառ Հայրապետը հանդիսով իջաւ Վեհարանից ու միաբանութեան ուղեկցութեամբ մտաւ Մայր Տաճար, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ սկսուեցաւ Ս. Միւռնի օրհնութեան կարգը։ Ծորին Օծութիւն Վեհափառ Հայրապետը և եօթն եպիսկոպոսներ՝ Գեր. Տ. Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը, Ներսէս, Սարգիս Արիստակէս, Դրիգոր, Մակար և Անանիա եպիսկոպոսները ու երկու բուրվառակիր վարդապետ սեղան բարձրանալով Միւռնիօրհնութեան մաշտոցից կարգացին որոշեալ զրքեր և աղօթքներ։ Երեկոյեան ժամերգութիւնից երկու ժամ անցած սկսուեց հրսկման կարգը։

Սեպտեմբերի 14-ին, Խաչվերացի տօնին, առաւօտեան ժամասացութիւնը սկսուեց ժամի 4-ին։ Բոլորը սրտատրոփ սպասում էին Ս. պատարագի սկսուելուն։ Վանքի բակը լրացուած էր ամեն կողմից եկած բազմութեամբ։ այդտեղ կարելի էր լսել Հայոց բոլոր բարրառները և Կովկասի բոլոր լեզուները։ Յանկալի ժամը հասաւ. ժամի 9-ին հնչեցին Մայր Տաճարի զանգակները, իւրաքանչիւր ոք աշխատում էր եկեղեցում իւր համար տեղ գտնել։ Այդ օրը պատարագիչ էր Գեր. Տ. Արիստակէս եպիսկոպոսը։

Պատարագն սկսուած էր բայց շատերը դուրսը սպասում էին հանդիսաւոր թափօրը տեսնելուն։ Զօրքը երկու կարգ շարուած էր Վեհարանից մինչև եկեղեցու դու-